Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Քասախի Ա. Հովհաննիսյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի 2 տեղ (16 և 15 դասաժամ), հայոց լեզվի և գրականության (19 դասաժամ), պատմության (15 դասաժամ), ֆիզիկայի (11 դասաժամ), ռուսաց լեզվի 2 տեղ (15 և 16 դասաժամ), երաժշտության (4 դասաժամ), կերպարվեստի (4 դասաժամ), մաթեմատիկայի (21 դասաժամ), ինֆորմատիկայի (2 դասաժամ), տեխնոլոգիայի տղաների խումբ (4 դասաժամ), ֆիզկուլտուրայի 2 տեղ (9 և 21 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրուցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3×4 չափի,
-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
-անձը հաստատող փաստաթուղթ,
-<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճեն (առկայության դեպքում),
-ինքնակենսագրություն (Ձև 5),
-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճեների հետ և բնօրինակները վերադարձնում : Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ապրիլի 26-ից մինչև մայիսի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. մայիսի 15-ին՝ ժամը՝ 14:00-ին,** Քասախի Ա. Հովհաննիսյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ. Քասախ, Տերյան փողոց շենք 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 19 60 13 հեռախոսահամարին: